

ՊԱՅՄԱՆՔ

Լոյսը կը հրատարակուի Զոհե-
օտքի եւ Շաբաթ օրեր :
Կ. պոլսոյ համար Տարեկան
գինն է մէկ իրա Օսմանեան կան-
խիկ վճարելի :
Դուրս գնացած լրագրաց համ-
րու ծախսը առնուղին վրա
Մէկ քերթը 40 փաւս :



ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Նամակ կամ ո եւ է գրութիւն
պէտք է ուղղել Առ Մ. Գալիա-
նի Կ. պոլսոյ, Չագմագընլու
պիւ խան քիւ 47 ,
ան սպարաւոր :
յոյան տողը մէկ անգամի
դրո. 2 անգամի համար
խակ աւելի անգամնե-
րու համար գաւս քսակաւորութիւն
կ'ըլլայ :

ՌԱՍՏԱՅԻՆ ԼՐԱԳՐԱՅԻՆ ԿՐԹԻՒՆ

Ներածութիւն Ս. Պատրիարքի հրատարակելուն

Բարեբաղդաբար միայն մենք չենք
քննադատող Ազգ. ժողովոյ արարքն
ու բնութեանը և միայն չենք նոյն ժո-
ղովոյ բռնած դիրքն և հետեւած ուղ-
ղութիւնը ազգային շահուց հակառակ
գտնողը :

Իզմիրի Արշալոյս — Արարատեանը
սոյն կարծիքն է :

Նոյնպէս սոյն կարծիքը կը յայտ-
նէ նաեւ Ռուսահայ — մամուլն առհա-
սարակ :

Եւ ամեն անոնք որ պաղ արեամբ
կը գիտեն իրենք, ու լրջութեամբ և
անկողմնակալութեամբ կը դատեն,
անկարելի է որ հաւանին և մենք
տարբեր կարծիք և համոզում ունե-
ան :

Մենք իբր պայցոյց յառաջ կը
բերենք աստ Արձագանքի մի հա-
մարտէն ճշտութեամբ նկատմամբ
մեն. Ս. Պատրիարք Հօր հրատարա-
կանին :

Հեռագիրը հաղորդում է, որ
Ներսէս Պատրիարքը, Ազգային ժողո-
վի աղակալի նստոյց յետոյ, հրատարա-
կան է տուել :

Հրատարականի շարժառիթները
գեւա ևս յայտնի չեն. յայտնի է մի-
այն, որ Ազգային ժողովի մեծամաս-
նութիւնը, գաղտնի խորհրդաւանք-
ների շնորհիւ, թշնամական գիրք էր
բռնած դէպի Սրբազան Պատրիարքը,
յայտնի է, որ այդ ժողովը առաջին
անգամը չէ, որ զոհում է իւր Պատ-
րիարքին, որ նոյն իսկ խորիմանի
պէս համեստաբարոյ և անբիծ մար-
դը ոսկիների (1) շնորհիւ ստիպուե-
ցաւ իջնել իւր գահից. այո՛, շատ
բան է յայտնի, բայց մենք գեւա
ևս կ'ապաստենք մանրամասնութիւննե-
րի :

Ինչ էլ որ լինին, Ներսէս Պատ-
րիարքը մեզ համար պատմական անձ-
նութիւն է և եթէ Ազգային ժո-
վի դրամաձարաւ երեցփոխաններից
ոմանք կարողացել են իրանց պաշտո-
նակիցներից շատերին իրանց կողմը
ձգելով զոհել նորան հէնց այն միջո-
ցին, երբ ազգը զրազուած է կաթո-

(1) Նոյն միջոցին Մեղու — Հայաս-
տանի լրագիրը հրատարակած էր թէ
5000 մանէթ ծախսուած է էլմիածնի
կողմից և Մասիս զայս հրատարակե-
լուն համար երջանկայիշատակ Գէորգ
կաթողիկոս բողոքեց Մասիսի դէմ,
բայց լուրջ Մեղու — Հայաստանի հրա-
տարակութեան մասին, չոր խիստ մօտ
էր իրեն :

Ը. Լ.

ղիկոսական խնդրով, այդ գեւա ևս
չի նշանակում, թէ նոքա Ներսէսի
հաշակից մի խոչոր ակն պակսեցնել
կը կարողանան : Ահա այս տեղ անդօր
են Ներսէսի հակառակորդները :

Արդեօք հարկ է բռնել թէ
գաղտնի խորհուրդ մ'ալ կայ Տանն
հիլիկիոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսն էլ-
միածնայ կաթողիկոսն ընելու, որոյ
մասին Լոյսի չորեքշաբթի աւուր
Ձուարճալեաց կարգին մէջ փոքր ակ-
նարկութիւն մ'ըրած էինք :

Ո՛վ գիտէ տակաւին ինչքեր երեւան
պիտի չեղան. բայց, ինչ որ ալ
ըլլայ, մենք խիստ ապահով ենք
թէ Ազգին ողջմիտ մասը՝ որ բարե-
բաղդաբար միշտ ստուար մեծամաս-
նութիւն կը կազմէ, պիտի չթողու
որ իր կենսական շահերն և իր սի-
րեցեալ Պատրիարքը գաղտնի խոր-
հաւանութեանց զոհ երթան :

ՄԵՐ ԴԱՏԻՆ ԱՌԹԻԻ

Պարտաւոր ենք հրապարակաւ
յայտնել մեր խորին շնորհակալու-
թիւնը ժողովրդեան բոլոր դասակար-
գին, որք ամեն կերպով փութացին
իրենց վիշտն ու ցաւը յայտնել ֆ.
գերդաստանի անդամոց ոմանց կողմէ
տեղի ունեցած նորկալի դէպքին հա-
մար, որ արդար զայրոյթ պատճա-
ռած է, և որք չդադրեցան առ
մեզ յայտնել իրենց ջնմ համակրու-
թիւնը :

Ոչ նուազ շնորհակալութիւն կը
պարտինք այն աղին անձանց, որք
պատրաստակալութիւն յայտնեցին
իւրեանց կողմէ նուիրել հարկ եղած
բոլոր դատական ծախքերը :

Որպէս գրած էինք այս չորեքշաբ-
թի, ոմանց ազգեցիկ անձանց և թէ
Ամեն. Ս. Պատրիարք Հօր միջամտու-
թեան պատճառաւ խոստացանք հը-
րատարիկ դատաւարութեան այն պայ-
մանաւ որ նոյն դէպքին հեղինակնե-
րը Ազգ. Հիւանդանոցի շնորհքով
գումար մը վճարեն :

Գրանի մօրէ ի վեր Ամեն. Ս. Պատ-
րիարքը տեսած լըլլալով այսօր չենք
կրնար հրատարակել մեր դատին վերջ-
նական կարգադրութիւնը :

Մեծ. Տօքթ. Փէշումալեան էֆէն-
տի, որ վեհ. Սուլթանին փափաքա-
նաց համեմատ Ձորապետ վսեմ. Բէ-
ուֆ փաշայի հետ Եւրոպայի հանքա-
յին ջուրերն գնացած էր, շարժուա
վերադարձաւ աստ :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Կաթողիկ ազգայնոց խիստ հետա-
քրքրական նոր խնդրոյն վերաբերեալ
յօդուածն հրատարակուած է Ձուար-
ճալեաց կարգին մէջ գաւաւտական ո-
ճով :

ԽՐԻՍՏԻԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Ձորեքշաբթի աւուր Լոյսի մէջ յիշ-
եալ հեռագրի մասին մեք ինչ կար-
ծիք որ կը յայտնէինք, նոյնք հաս-
տատուած է նոյն իսկ խորիման Սըր-
բազանի առ Պատրիարքարան ուղղած
բացատրութեան գրովը :

ՄԱՀԱԳՈՅԺ

Մանուկեան բարեհամբաւ դեր-
աստանը խիստ ցաւալի կորուստ մը
ըրաւ :

Աղնուափայլ Օր. Ջարուհի՝ դուստր
Մանուկեան Մեծապատիւ Երանոսի
էֆէնտի, յետ կարճատեւ հիւան-
դութեան իւր 18 ամեայ ծաղիկ հա-
սակին մէջ մեռաւ անմիջեմար սգոյ
մէջ թողնել իւր աղին ծնողքը, եղ-
բարքը, քոյրերն և համայն Մանուկ-
եան գերդաստանը :

Օր. Ջարուհի նշանաւոր տեղ մը կը
բռնէր իւր սեռին մէջ իր ստացած
բարձր կրթութեամբն և սրտի ու
մտաց չքնաղ յատկութիւններով :

Հետեւաբար իւր ոյս տարածամա-
հը ցաւալի կորուստ մ'եղած է :

Երկնից միութարութիւնը կը հայ-
ցենք իւր աղին ծնողացն և համայն
պորագաւորիցը :

ՄԱՔՈՒՐ ՊԱՏՈՒԱՍ

Փոքրիկ տղայը պատուաստելու յարմար
ժամանակն ըլլալով այս եղանակը, կը
յանձնարարեմ մաքուր պատուաստ ուղղո-
ւենք դիմել Բերա Մարգարիտ փողոց
Տօքթ. Կապուցցիի քով որ յատկապէս
մաքուր պատուաստ բերել կուտայ ամեն
չաքաթ խաւիպէն : Աւելի ունենալով մի
քանի անգամ փորձել Պ. Կապուցցիի պատ-
ուաստը, անկեղծօրէն կը յայտարարեմ որ
միշտ յաջողեցայ անոր պատուաստներով :

Ռ. ՌՕՊԷՆՍՈՐ

ՅՈՒՅԱԿ ՉՈՐՐՈՐԴ

1883 Դարաց հնգանասերեւ
Ի ՆՊԱՍՏ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ
Լիրա Օսմ.
Երրորդ ցուցակին գումարը 396 1/2
Մեծ. Տեարք
Տիգրան Գարակէօզեան 10
Գ. Սամանեան և Մոմսեան 8

Նշան Հարէնց	8
Դրիգոր Ներսէսեան	8
Մանուկ Սմարտեան	8
Յովհաննէս Կիւմշեան	5
Աստուածատուր Ձուար- ճալեան	4
Յովհաննէս Պէլիկեան	4
Աղաթան Թահապարեան	4
Դաւիթ Նարեան	4
Եղիա Շահապարեան	4
Նշան Մոստիքեան	4
Բուլեան, Ճէզլէճեւ. և Արապեան.	4
Կ. Թ. Գաբամանեան	4
Ենովք Բուլեան և Ընկ.ին	4
Մ. Գառնիկ Յովակիմեան (ոսկերի)	4
Սարգիս Թաշեան	4
Պապիկ Գալլինեան	4
Պօղոս Ֆրէնկեան	3
Կարապետ Պապեան	3
Յովհաննէս Ղօնէկիւլեան	2
Յակոբ Այլեան	2
Յովակիմ Անդրէասեան	2
Սիմէոն Մանուկեան	2
Կարապետ Պամանեան	2
Մկրտիչ Անդրէասեան	2
Յարութիւն Սամանեան և եղբայր	2
Կուռնիկ Ս. Համամեան	2
Ռուբէն Սէմէրեան և եղբարք	2
Կարապետ Բիւրքճիւխանլեան	2
Յակոբ և Միսակ Թաշեան	2
Պետրոս և Յարութիւն Շահինեան	2
Սենեքերիմ Պամանեան	2
Թովմաս Գարապաշեան	1
Յովհաննէս Գէշկեան	1
Աբրահամ Գիւրքեան	1
Յովհաննէս Մըսէրեան	1
Կարապետ Գալաքեան	1
Դէորդ Գալուստեան	1
Դրիգոր Գէօրգեալեան	1
Նազարէթ Այլեան	1
Գալուստ Սերոբէեան	1
Մեղան Հալաճեան	1
Գերովք Սահակեան	1
Ռուբէն Էպէյեան	1
Մարկոս Պէշիբեան	1
Սարգիս Տէպեան	1
Յովհաննէս Աղնուորեան	1
Արսէն Արսէնեան	1
Նիկողայոս Պարօնեան	1
Եղիա Սարգիսեան (սենեկապետ Մեծ նոր խանի)	1

Գումար 540 1/2

Մնամք յարգանք

Ի գիմաց Հիւանդ. Հոգաբարձ.
Ատենադպիր Ատենապետ
Տիգր. Կիւմշեան Կիւմշեան Միգ. ՅԱՊՈՒՅԵԱՆ
1 Սեպտ. 1885
Դրաս. Ազգ. Հիւ.
Կ. Պօլիս

ՀԱՅԻ ԱՐՁԱՆԻՔ

ՎԵՐԱԳՆԱԾՈՒՄԻ ՀԱՅՅ ՄԵԿ ՆՈՐ

ՀԱՅԵՆԻՔ

Տէր իմ, հիմա անշուշտ գիտիմանք, իմանա՞նք զիս իմ երկարատե քայլա-
կայութեան համար, բայց Տօն Ա-
զարեանի գլխոյն վրայ կ'երգնում որ
ամենակարեւոր և խիստ հետաքրքրա-
կան գաղտնիքի մը խորք թափանցե-
լան է էր, և վերջապէս ուրախ
եմ որ հասայ իմ նպատակին .

— Եթէ յանցանքը ծածկելու հա-
մար քու հնարած մէկ վարպետութիւ-
նըդ, չէ պատրաստ եմ հետաքրքրու-
թեամբ լսելու . —

— Ծածկել, ընդհակառակը, ես
ալ փափագեան էֆէնտի կարծիքէն
ըլլալով կուզեմ որ ամեն բան յայտ-
նելի, և ահա ասոր համար է որ ա-
մեն վտանգ աչք առնելով ամենա-
ճարտար եղանակաւ մը նոյն գաղտ-
նիքը բռնեցի, զոր հիմա երևան պի-
տի հանեմ . —

— Տանէ տեսնենք ուրեմն . —

— Տէր իմ, ես որ իմաստունի մա-
տը խածած ըլլալու համար խիկար
իմաստուն կը կոչուիմ, իմ գերարշիա-
մենամեծ, մեծ և խիստ մեծ իմաս-
տութեամբս գուշակեցի (ականջը խօ-
սի մեր Նիկողոս մարգարէին) որ դա-
թիկաց Պատրիարքարանի այսքան
խորախորհուրդ լուծութիւնը հարկաւ
պատճառ մը՝ զօրաւոր պատճառ մը,
և գուցէ դժուարաթափանցելի կամ
անթափանցելի նպատակ մը ունի .
ուստի այսքան մը գուշակելէ յետոյ
կը մնար որ խիկար իմաստունս այդ
բանին ետեւ ըլլայի և ինչ ըլլալը մին-
չե որ աղէկ մը չի հասկնայի, Բերայէն
Պօլին իմանցնէի ի՞նչ վրէժ, անէ իմ,
սոյն հաստատամտութեանս . —

— Դա՛տ աղէկ, շա՛տ աղէկ . յե-
տոյ . —

— Յետոյ կազ սատանայի կերպա-
րանք մտայ և սկստայ ամեն տեղ խու-
զարկել, սակայն նայեցայ որ այս
հնարքով բան մը չպիտի չահիմ, ո-
րովհետեւ սատանայ ըլլալու համար
ամեն ոք ինձմէ կը փախեր . պէտք
եղաւ որ ուրիշ աղբու միջոց մը ձեռք
առնէի . վարդապետի կերպարանք
մտայ, և սկսայ մօտենալ վերապատ-
ուելի հայրերուն, բայց քիչ ատենէն
համոզուեցայ որ այս միջոցն ալ մէկ
կուտ չ'ըներ, որովհետեւ զիս մօտէն
չ'անցնալուն համար ինծի չէին վըս-
տահեր, մաղ մնաց որ բարկութենէս
պիտի ճախէի, որովհետեւ կրակ կըտ-
րէր էի . վերապատուելի Հայր Էն-
ֆիէճեանին մօտեցայ, անկէ ալ խեր
չտեսայ, որովհետեւ ոմնոր ալ այս մի-
ջոցիս մօրուքը բռնկեր էր, ճակատս
չիեցի ու չփնչեցի և ահա յանկարծ
խիստ փառաւոր լոյս մը ծագեցաւ
մտացս մէջ, իսկոյն գործադրեցի, այ-
սինքն, մարապետի կերպարանք մտայ
և զիս ամենաբարեպաշտ և ամենա-
ջերմեանդ կաթողիկ ձեռնադրով
մօտեցայ քոյրերուն, կաթողիկու-
թեան տարածման միջոցներուն վրայ
խօսեցայ և վերջապէս անոնց վտա-
նութիւնը գրաւելով սաչափ միայն
տեղեկացայ որ Հայ—կաթողիկ եկե-
ղեցականաց կարեւոր ժողով մը պիտի
գումարի եղեր . Այս որ լսեցի, փո-
խեցի կերպարանքս, գացի կորստա-
գիւտ Ս. Մինասին և ուխտեցի որ
մեծկակ մօմ մը վառեմ, եթէ հասնիմ
իմ նպատակին, և վերջապէս հա-
սայ . —

— Ինչպէս . —

— Այդ պէնպէս որ երկար է, յե-
տոյ կը պատմեմ, հիմա սա ըսեմ որ
այդ փոքրիկ մէջ սա մի որոշում մը
որոշեցան, զորս գիտնայ խիստ կու-
րեւոր է . —

— Կարեւոր . —

— Այո, խիստ և ամենախիստ կա-
րեւոր լսեցէք, ժողովը նկատելով Ս-
կաթողիկ—Հայոց Հայութեան մէջ ձեռ-
ք բնաւ օգուտ մը չպիտի ընէ, ինչ-
պէս որ քրոջ չէ եղեր մինչև հիմա,
որոնց ի մօտոյ գործածել Գրիգորեան
տուժարք, Հայու ձեռով և ձայնաւոր
պատարագ չընել, հայերէն լեզուն
բնաւ չգործածել և մէկ խօսքով ըն-
դունիլ Լատինականութիւնը, որովհե-
տեւ կը կարծեն եղեր այս միջոցաւ
վայելել պաշտպանութիւն և բարիք-
ներ, որոնցմէ մինչև վերջը զրկուած
պիտի մնան եղեր, եթէ չթողուն
Հայութիւնը .

(Գալ անգամ)

— Գալ անգամ —

Ք Ն Ա Լ Ը

Այս կղզին անծանօթ չէ իր անց-
եալովն ու ներկայովը .

Մինչև մօտ ատեններ աքսորանաց
կղզի կը կոչուէր .

Շատ հաւանական է որ աղբային
բարերար Մեծն—Ներսէսալ այս կղզին
աքսորուած է .

Վերջին ժամանակներս անունը
փոխուեցաւ և կոչուեցաւ Հայոց կղզի
բայց հակառակ իր նոր ստացած ան-
ունն, բաւական ատեն մնաց իր ան-
շուք վիճակին մէջ, և իր այս անշուք-
ութիւնը առածի կարգ անցած էր .

Սերվիլէն էֆէնտի որ մը ըսած է
այս կղզիին համար թէ Առաքիւս արքա
մը և Չընարի ծառ մը ունի .

Բայց վերջին 3—4 տարիներէ ի վեր
սկսած է զգալի փոփոխութիւն կրել,
և ուր այժմ օդափոխութեան համար
բաւական թուով պատուաւոր ընտա-
նիքներ Հայ և Յոյն կ'երթան, որով-
հետեւ թէ օդը խիստ լաւ է և առող-
ջարար և թէ դիրքը գեղեցիկ և Պօ-
սոյ ալ մօտ է .

Առջի աքսորանաց վիճակին պէս
մարդ հիմա հոն ուտելիքի և խմելի-
քի դժուարութիւն չի քաշեր .

Կայ գեղեցիկ եկեղեցի մը, դպրոց
մը, որ բաւական լաւ վիճակի մէջ է,
և մասնաւոր դպրոց մ'ալ, որ գեշե-
րութիւն աշակերտներ ևս կ'ընդունի .

Եթէ Տ. Գրասէր—Ատոմ և կամ
Տ. Մ. Չերազ որ մ'այդ կղզին այցե-
լութեան երթան, կարծենք չպիտի
վարանին Հայոց փարիզն անուանել
զայն (1) .

Գլխաւոր աղէկութեան մէկն սա է
որ մարդ հոն կրնայ զուարճանալ ա-
ռանց մեղանչելու էքձօմի զէմ .

(1) Յիշեալ կղզին կրօնական տե-
սակէտովնաւ նշանաւոր է, որովհե-
տեւ տարբեր աղբէ և յարանուանու-
թենէ երեք կրօնական դուլներ՝ Ե-
րուսաղէմոյ Ս. Պատրիարքը, Թոնաց
Ս. Պատրիարքը և Բողոքականաց Մեծ.
Աղբապետը 3 շաբաթ առաջ անդ կը
գտնուէին .

Այս վերջիններ տակաւին հոն են,
կը թուի թէ տիեզերական ժողով
կազմած էին անդ .

Չմոռնաք ըսելու որ 12 տարի ա-
ռաջ Մանգուլէի երեւակայութեանը
մէջ գոյութիւն ունեցող Ստաթուր,
չուօնիս ալ այս կղզին ծանօթացնելու
ծառայած է .

Ըստ մեզ գէշ չըլլար եթէ մեր
Պատրիարքարանն ալ հանդերձ Ընդ-
հանուր ժողովով հոն փոխադրենք,
Պատրիարքարանի ներքին վարու-
թիւնն ալ Տ. Բ. Քէշեանի յանձնելու
պայմանաւ, որով, տարակոյս չկայ
թէ, այլ ևս կը դադրին թէ Պատ-
րիարքարանի դէմ Մասիսի հակակրու-
թեան պատճառը և թէ ազգային
լուրերու մասին Մասիսի և թէրճէ-
մանը—էֆէնտի միջև ստէպ տեղի
ունեցած աչք և գլուխ ուռեցնող
գորտամկնամարտութիւնները .

Մասիս ի հարկէ առիթ կուենայ
նոյն ատեն ֆնալի զանգակատան
խնդիրն ալ նկատողութեան առնելու
որովհետեւ այդ զանգակատունը ֆնա-
լի արդի համաւայն տեղը կողմը կը
կազմէ .

— Գալ անգամ —

Բարձրէն երկրորդի մը յոռն—հայտնա-
կենցաղ

Կատարողադիւր համաւայն դերաս-
տաններէն միոյն վերաբերող բարձրին
Հայ—երկրասարդի մը ի Բերայ ընդ յոյն
չաստուածուհոյ մը կենցաղավարութեան
նկատմամբ տեղեկութիւններ հասած են .

Այդ տեղեկութեանց նայելով յիշեալ
բարձրին երկրասարդը նոյն չաստուա-
ծուհոյն շնչամբը չաստուածոց կարգը
բարձրացեր է կամ պիտիբարձրանայ ե-
ղեր .

Ստուգելէ յետոյ սոյն հետաքրքրաշարժ
եղելութիւնը, մտադիր ենք հրատարակել
անշուշտ ի մեծ փառս յիշեալ բարձրին
երկրասարդին .

— Գալ անգամ —

ԱՏԵԱՆ ԼՈՅՍԻ

ՆՐԱՍ Դ

Արեւմտեան . — Գօթն . — Հայ . —

Կոմիտաս . — Հայ—Պարս . — Տը Պարս .

Պ. Կամպէզդա՛, Ատեանս որոնց
Տնտեսական խորհրդոյ քննութեանը
յանձնել ձեր կալուածոց հոգաբար-
ձութեան վերաբերեալ հաշիւներ
ըլ . —

— Բոլոր զօրութեամբս, ոտքով,
ձեռքով և պոռալով ու ճնշելով կը բո-
ղբեմ ձեր այդ որոշմանը դէմ և կը
պահանջեմ որ իմ այս բողբոս հիմակ-
ւընէ արձանագործուի . —

— Հոգ մ'ընէք, կ'արձանագործուի
և թէ կը հրատարակուի . —

— Հրատարակուելուն դէմ ալ կը
բողբեմ . —

Այդ ալ կ'արձանագործուի և կը հը-
րատարակուի . —

— Տէր նախագահ, յոյժ կը յաւիմ
որ պատկառելի ատենադ. ձախաւել-
եան երեսփոխանի մը անբռնարարելի
իրաւանցը վրայ ճնշում կը բանեցը-
նէ . —

— Ձեր գործերն ու հաշիւները
քննութեան ենթարկելուն համար,
այնպէս չէ . —

— Տարակոյս չկայ, երեսփոխան մը
ինչ որ ալ ընէ, ի՛նչ որ ալ խօսի և
ինչ գործ ալ որ ունենայ, չկրնար
քննութեան ենթարկուիլ, որովհետեւ
ազատ է և որովհետեւ երեսփոխան
անբռնարարելի է . —

— Ատեանս կը պատասխանէ մի-
անգամ ընդ միշտ թէ Հայ — ազգն
այդ կերպ երեսփոխանութիւն չ'ըն-
դունիր . ուստի ատենախորհուրդ
որոշում է կարգը եկաւ հիմա քննել
Մեանկեան ժառանգութեան խնդի-
րը . —

— Բսել է որ ուրիշ տարատանու-
թիւն չկայ . —

— Շատ . սակայն ասոր ստիպու-
ղութիւն տրուած ըլլալով Ատեանս
առաջնութիւն կուտայ այդ խնդ-
րոյն . —

— Բայց միթէ իրաւունք չունիմ
այդ խնդրոյն մէջ . —

— Պ. Կամպէզդա՛, իրրեւ երեսփո-
խան կը հարցնէք, թէ իբրեւ փոխա-
նորդ . —

— Ես ի՛նչ որ իբրեւ փոխանորդ կը
գործեմ, զայն կը պաշտպանեմ
Ազգ. ժողովին մէջ իբրեւ երեսփո-
խան . —

Բսել կուզէք թէ ձեր պաշտպանած
ազգասէր դատը օգուտ Ազգին ան-
չահախնդրարար վաստկելու համար
վարչութեան վրայ ամեն կերպ ճնշ-
ւում ի գործ կը դնէք . —

— Դարձեալ կը բողբեմ, տէր նա,
խագահ, երեսփոխան մը, ազգային
չահուց և իրաւանց ջերմ պաշտպան
և Պատրիարքաց քննադատ երես-
փոխան մը կ'անպատուէք . —

— Ատեանս չ'անպատուէր, այլ կը
դատապարտէ .

— Գալ անգամ —

ԿԱԶԳԱՐԱՐՈՒԻ

Կ'ազգարարուի Լ. Ֆ. և Թ. Չ. որ
Բերեզմանաքիթի մէջ դադրեցնեն ի-
րենց շահատակութիւնները, որոնց
չափը անցած է .

Կ'ազգարարուի Դատաւորադիւր
բնակեալ այն ճէնթըմէնին որ կամ
... հետ ամուսնանայ և կամ հրաշա-
փառապէս խայտառկուելու պատ-
րաստուի .

Կ'ազգարարուի Հայրենիք պատուա-
կան լրագրին որ Էօլիւման Պետրոսի
ինքնասպանութեան պատճառն ու
չարժանիքը յայտնող ռամակը հրա-
տարակէ, զոր խոստացած էր .

Խ Տ Ի Դ

— Գալ անգամ —

Խրեմա Սըբուրնի իրեւմ հեռագրի մը վ-
եցոց հիշելը

Վանեցի եղբայրներինս այս հեռագ-
րին վրայ շուարած սկսան հաւաքուիլ
մեծ սրճարան մը . որոնք էին, Ավ-
տօ, Մառօ, Սախօ, Կիկոյ, Ասիա-
տուր, Պարսիկը, մահաթախ Նըշան,
Սէխօյէնց վարդան, և ըն . և ըն .
պարեւ ձէ անպարտանք պարով խա-
ղար պարով, պարեւ ածսանք հաճի
աղայ անուշ կինաս կենդանի մընաս-
ները լըմէնալէն ետեւ կսկսին վիճա-
բանութեան, խօսք առնող Սէխօյէնց
վարդան աղան է .

— Ախպրտանք մտիկ արեք ինծիք
մէկ պան ասեմ մէկ զըմէն հէմէրի
ենք, նէչէ քի հէմէյի իսէնք իսէ,
զըմէնուս մէնֆաթթ պիտի իրիչկենք
քիւնչիւ ատաթէ Էսանկ ի՛ խիմայ մէր
երկրի առաջնորդ Կրիմեան խայրիկ
մէկ թէլիարաֆ է օրօխկեր Էսա չէկիր
ուշախացս երկիր, (Պօլիս ըսել կուզէ)
Էսա թէլիարաֆի մէջ մէ պան կայ որ
կասէն, ինչ կանտար աեաղթալըմիք
վըրըլիք ջըլուաներ կայ իսէ 12 ան-
ձանց համար առաջնորդարան դիմէցին
իսէ նէ Էսոնք զըմէն սուտէ և օնտան
սօնրա էֆէնտըմէ սէօյլէեամ պատժոյ
արժանի մարդիկ են կասէ Էսօր ինչ
կասէք .

— Քէ կուռպան հաճի աղայ Էսա
որ կասէս իսկունի .

— Խսելու

— Ավորդ

— Գլխիստոս

— Վուհէ

— Եսա մի պան ասիմ, Էսա սուտ

է խայրիկ Էսանկ պան չանէ .

— Մըկայ կասիմ քիրիսոնոն .

— Մօ յանորդութիւն է մէկ հալ-տայ չորպաճանցմէ վախճալուց խա-մար էտանկ է ասել :

— Աստուած քէօ խելք տայ կրքմիճն տիւսկից կը վախէ , էստադ միւսքին չիգայ մէյ պան կայ աղիս ասիմ է-ֆէնտրմէ սէօլէեամ ինծիք որ խար-ցուցիք խայրիկ էնոց խետէ :

— Ես :

— Այօրդ :

— Քիրիսասո :

— Պապոյ , ինչ կասէք տուք , խայ-րիկ որ ճոճերաց խեա ընիր էսա չու խմա մէր խալ բէրուչան էլէրէր , ես մէղաց տիր չեմ կարնայ ընիր , Աստ-ուած կարգ խառտատ պախի , իմ կեանք էնոր ընիր :

— Ես ալ կասիմ որ իսկուհի կրքմիճ որ չընիր իմ չուրիս ճոճուի անտոի կը խառտեր , Աստուած իմ թէնէնէրէ-տեր խառտատ պախի :

— Էֆէնտրմա սէօլէեամ , կըթըխ որ եղաւ , խայրիկ որ չընիր ոչ քիւր-տէր միացեր ոչ վանէցի խայեր , զըմէն խատէր պոճիք քիւր բերուչան էլիրէր մը կայ կասէք թէլիարաֆ է օրօկիր էտանկ կասէ էնանկ կասէ զըմէն սուտ ի , Աստուած էնոր կարողութիւն տայ , իմ ալ սէմէրին :

— Մընացէք պարի հաճի աղայ :

— Տէօր կերդաս :

— Էրթամ բըրինձ առնէմ ցորեկին բիւլա զարնէմ :

— Քէօյ խելք ինչ կասէ էսոր մէյ պան ասէ էնակ կընայ :

— Ինչ ասիմ հաճա աղա ինծիք որ խարցունէք էսա խօսքեր ով որ խա-նից կերդամ էնոր , մէյ բէտ կը գետալիմ չու ոսկորներ կոտրի :

(Երանանկիւն)

— Երանանկիւն

ՁԱԽԵՏԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ

Ագահ մարդ մը ինքզինքը , կախեց կըսեն , գիշերը երազած ըլլալուն հա-մար որ ծախք կընէր :

— Այնպիսի դժբախդ եմ , կըսէ՛ անմիտ մը , որ եթէ գլխարկ ծոխե-լու սկսիմ , ալ մէկը գլուխն չ'կորեր :

— Երեք բանի վրայ մարդ պէտք չէ վստահի , մեծերէ ընդունած շը-նորհքներուն , կեներէ ընդունած գոգունաց և ձմերային գեղեցիկ օ-րերուն վրայ :

— Այն անձն , որ սիրոյ մասին ան-տարբեր կը վարուի , չէ գտած գեռ այո առարկայն որ զինք պիտի բոր-բոքէ :

— Անխորհրդապահ մարդ մը իւր բարեկամին գաղանիք մը վստահելով կը յանձնարարէր անոր որ ուրիշի չի-մաղնէ . « Ես ապահով եղիք , կը յարէ սոյն վերջինը , միթէ ես ձեզմէ նսւաղ խորհրդապահ եմ » :

— Հեղինակ մը , որ միջակ արժանե-տեք տէր էր , հոշակաւոր գրադէսի մը գլխաւով , անկէջ այնպիսի նիւթ մը կուղէր , որու վրայ դեռ ոչ ոք գրած ըլլայ . « Ձեր ներքուը գրե-ցէք » կը պատասխանէ գրագէտը :

— Մարդ մը , որ ստակ վոխ առ-նելու և չհատուցանելու մասին հըռ-չակ հանած էր , իւր մէկ բարեկամէն 20 ֆրանք փոխ կուղէր . « Ես 10 ֆրանք . կը յարէ բարեկամը , զոր փոխանակ փոխ տալու , ձեզ կը պար-գեւեմ » , ասանկով թէ գուք շահաւոր կընէք և թէ ես » :

— Դէմքն ամեն ինչ է , կըսէր Ֆոն-թընէլ , դէմքով գեղեցիկը միայն գեղեցիկ կը կոչուի , դէմքն երաշ-խաւորն է ամեն մասերուն , որ ծած-կուած են և մինչև իսկ կրնամք բոլ-դէմքին գեղեցիկութիւնն այդ մասե-րուն վրայ կը տարածուի , ինձ այն-պէս կը թուի թէ բազում մը գեղե-ցիկ չէ , եթէ գեղեցիկ դէմքի մը չը պատկանիր :

— Իմաստակ մը ոտանաւոր մը չի-նած ըլլալով , մեծ բանաստեղծի մը ներկայացուց զայն , որ առած պա-հուն ձեռքէն ձգեց և դիպուածով թուղթը վառաւանին մէջ թռաւ , ի-մաստակն ուղեց զայն առնուլ , բայց միւսն անտարբերութեամբ բաւ թո-ղէք որ այդ թուղթն իւր կոչմանը հե-տևի :

— Ապիկար նկարիչ մը ընկերու-թեան մը մէջ գտնուելով , կը գով-ուէր թէ իւր սենեկին ցեղունը պիտի բռնէր և ապա գեղեցիկ կերպով նը-կարէր . « Լաւագոյն չըլլար , յարեց զուարճախօս մը , որ նախ նկարէք և ապա բռնէք » :

— Թիմոն , հոշակաւոր մարդատեաց փիլիսոփայն . օր մը ծառի մը վրայ կախուած երկու էին տեսնելով , « Տար Աստուած , դուք , որ ամեն ծառ նմանօրինակ պաղով մը ծած-կուէր » :

— Վօլթէր գիտունի մը վրայ ներ-բող գրած ըլլալով , եկան իրեն ըսե-լու թէ սոյն վերջինն իր մասին լաւ համարում չունէր . « Թերեւ երկուք-նիս ալ կը սխալիմք » պատասխանեց Վօլթէր :

Կ Ն Ի Ո Հ

Հ Ե Գ Ն Ա Կ

ԻԶՄԻՒԻ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ

(Փոքնեքն եւ իւրեք)

Հասայ Սատանայ—Երեւոյն բերանը՝ որ Տարտարոսի բերանին չափ սարսափ ազդեց ինձ : Ինչպէս մտնէի արեւօք հոն . . . Բոպէ մը կանգ առի և դռնէն . . . Հայր Գիտ , եթէ հնար է անց՝ դաժակա զայս յինչն : Սակայն անհնար էր չլսել այդ բաժակը , ուստի պարպեցի , այսինքն դրի ոտքս , զողորմուն և ցաւահար ոտքս՝ Սատանայ—Երեւոյն բերանի մէջ հաշուելով որ Պօա օձին բերանը կը մտնէ : Օղն ու արեւը հետք չունէի այդ Տարտարոսին մէջ , հաղիւ ընդ ազոտ կրցայ նշմարել որ իրօք օձին բերանն եմ , վասն զի գիտեցի որ Փորձանքը (փորձոցը) օձապոյտ և ոլոր-մո-լոր ձև ունէր : Սա չէնքը չեղակի , նա չէնքը ուղղակի , սա՛ խոտորանկի , նա՛ . . . Կի , մին երեք կանգուն դուրս , միւսը կէս կանգուն ներս , երրորդ մը կիսով դուրս և կիսով ներս , սա անկուած , նա՛ ցցուած : Գլխուս , ոտքիս և կողերուս ցա-ւերը երթալով կը նուազէին և ատոնց տեղ ծիծաղոս ու զարմանքս կը շատնային այս փորձանքը փորձելով . որուն քարայա-տակ կոչուած ժայռերը տեսնելով կարծե-ցի թէ կիրճի մը մէջ կը գտնուէի , սա-կայն կիրճ չէր , քոյր էր վասն զի մէջը խանութներ կային և մարդ արարածները շարունակ կ'անցնէին անկէ , ոմանք վազե-լով , ոմանք բալէլով , ոմանք ինչալով , ո-մանք ելելով , ոմանք . . . վասն զի այդ քարայրաձէ երկու քայլը բլուր , երեք քայլը բլրակ , չորս քայլը խոռոչ , հինգ քայլը ապառաժ , վեց քայլը ձահիճ , եօթ քայլը անդունդ և ութ քայլը քարակոյտ էին , զորս մարդերը քոյրաքոյր կը կոչէին :

Իրենց լեզուով , և համոզուած ալ են թէ իրօք քարայրատակ է : Ասոնք էին ահա կայնած բոպէիս , այդ փորձանքին մէջ դիտածներս : Քայլ մ'առի , և ահա ոտքս խոռոչի մը մէջ ինկաւ և սխալեցաւ երկու քարի մէջ տեղ , այդ խոռոչը սայլի անկները բացած են , ըսաւ ինձ մարդ արարած մը , որ եկած էր ոտքս ազատե-լու մարդակրական կամ աստուածասիրա-կան գործին երկուքս մէկէն աշխատեցանք ոտքս ազատելու ես ցաւէս լալով , նա՛ լեզուս խնդալով : Հանեցինք վերջապէս ոտքս՝ մուճակիս կրուկը խոռոչին վրկանք ձգելով :

Շնորհակալ եմ որ ոտքս կոտրած չէր , բայց ցաւն անտանելի էր : Կողն ի կողն սկսայ ընթանալ , այո՛ կաղ կընթանայի , վասն զի թէ՛ ոտքս կը ցաւէր և թէ՛ մու-ճակիս կրուկը կը պահէր , որ երկու ոտ-քս հաւասարակշիւր խանգարեց : Սոյն միջին լսեցի յանկարծ որ է , էջերու խուփ մը կը վազէր ետէս , սիրտս դող ելաւ Արապ-Փորձանքին մէջ քաշածներս յեւե-լով , սակայն որքան երանի կարգացի այդ փորձանքին մէջ քաշածներու՝ երբ զա-նոնք բաղդատեցի այս փորձանքին մէջ քաշածներուս հետ , որը չարարանացս Գլուխ-Գործոց կազմեցին : Թող էջերն հաւ-նելու վրայ ըլլան , դիմացս բրթաւ յան-կարծ բամբակի ահալին հակեր բեռցած ուղտեղէն բանակ մը , որ նախնի փղա-յին պտտերազմները յիշեցուց ինձ , պա-տերազմներ՝ զորս կընէին Պարսիկները ֆիլիբեր գերագեղ սպանալիներով : Ուղ-տերուն առաջնորդները , մին միւսին վրայ նստած , և ուղտերէն երկուքն հաղիւ-անցած էին Գատաւոր-Պանդոկին (լաւ չեմ յիշեր թէ Գատաւոր-Պանդոկի կը կո-չեն , եթէ ոչ Գատաւոր-Պանդոկ) վեր-ջապէս . . . Պանդոկին առջևի նեղ կիրճէն և ահա երրորդ ուղտը կը սխալուի փոր-ձանքին երկու պատերուն մէջ , բեռները մեծ եկան էթէ ոչ փորձանքը նեղ եկաւ՝ որ չկրցաւ թշուառ ուղտն ինքզինքը ա-զատել :

Գիտար խնդիր : Սակայն ճշմարտա-մէջ էր խեղճը , առջևէն կը քաշէին միջը փունջերու աստիճան , երկու կողմէն կը սկսէին կողերը կոտրելու աստիճան , վեր-ջապէս բռնուած էր առջևէն , ետէն , աջէն , ձախէն : Առջևի ուղտն անհոգ , ետևի ուղտն անհամբեր , պատերն անըզ-գայ , ինչ ըներ հիւս խեղճ կեղեղանին . սկսաւ որտեղուա գոռալ՝ ամառնային շան-թաճիգ ամպի մը պէս : Առջևի ուղտին կապուած պարանք կը փրթի , ինք կը գո-ռայ , ուղտապանը կ'ոռնայ և իշուն վրա-յէն կատաղութեամբ վար ցատկելով , ձեռքի երկաթեայ ձողը թշուառ ուղտին վրէն կ'իջեցնէ : Կենդանին կը դուռայ , մարդ արարածները կը սկսին ձար մը փնտռել : ձար ' . . . Հասաւ էջերուն խոռոչը , որոց դաւակին վրայ անխնայ հարուածներ կը տեղադնէր իշուարն իր ձեռքի փայտով : Նոյն բոպէին՝ կոռնակն ահագին եւ անեղակի մեծութեամբ եւ տախտակեայ սնուկ մը կրող բեռնակիր մը դուրս ելաւ փորձանքին մէջ գտնուող Փրանկանոցի դուռէն . որու առջև ես կը գտնուէի , և կը զիտէի որ միւս կողմէ ահագին սայլ մը կը մտնէր էջերու մէջ , որը ցրուցան ըլլաւ սիոնցին յախմայն :

Այս համբերող և սիրուն արարածները , նկատելով որ անցքերին գոցուած է , նկատելով որ աղմուկին մէջ չափէ գուրս կը նշողուն , նկատելով որ բեռերուն ծանրութեան պատուհասէն զատ ծեծ ալ կուտեն յանկրաւի , միշտ յանի-րաւի , արժան դատեցին իւրաքան-չիւրն իր ուղած խանութին մէջ մտնել : Սակայն հարկ եղած ընդունելութիւնը չէ-ին գտնել խեղճերը . մարդիկ կը պոռա-յին և դուրս կը հրէին դերնք , պատ-ճառելով թէ մեղքին հաւասարութիւն չունէին , և մասնաւոր թէ բեռցած աւազն ու կիրքերն խանութ կը թափէին , Միւս կողմէ բեռնակիրն սկսաւ յուսաւա-տաբար պոռալ , տեսնելով որ պաշար-ուած էր մարդոց , իշոց , ուղտից և սայ-լից խառնաշփոթ կուտակման մէջ : Ուղ-տին վրկուկները վախճան գտած էր , բեռները վար առնուելով , սակայն բռն խնդրելով փորձանքին անցըն բացուելուն մէջ կը կայանար : Հնա՛ր : Այս հնարին վրայ կը խորհէի երբ յանկարծ խեղճ է-

չերէն մին մարդ արարածի մը կողմանէ ետէն հրուելով՝ դուրսը բեռնակիրն ոտ-քին զարկաւ աղամայ : Բեռնակիրն իր հա-ւասարակշիւր կրուկներով ձգեց կոռնակի սենեակը (սնտուկը ըսել կուզեմ) որ գըլ-տորելով ուղտի ոտքին վրայ ինկաւ : Ուղ-տըն սկսաւ դառնալին պոռալ , ոտքը վրաւորած էր կարծեմ , ուղտապանը կա-տաղորէն յարձակեցաւ բեռնակիրն վրայ ստիպի հայհոյութիւններ ժայթքելով , բեռնակիրն իր առթած վնասին և յոգնու-թեան ցաւէն յուսահատ երկաթեայ ձողը մէջքէն քաշելով քիչնչեւ պաշարանք ուղ-տապանին գլուխը ձեղքելով : Երաբար , զայրացած , գրեթէ կատաղած և յուհաւատ մնացեր էի այս անտանելի և անել քառսին մէջ , երբ յանկարծ տեսայ որ մարդ արա-րածներէն շատեր այս Տարտարոսին դուրս ելլելու միջոցը գտած էին , այսինքն ուղ-տերուն փորին տակէն կ'անցնէին ոմանք ծեղով , և ոմանք սողալով :

Այդ միջոցը բարի օրինակ մը կարծելով ես ալ փութացի ուղտի մը փորին տակէն սողալ փորձել , սակայն հաղիւ թէ մէջքս ծռած գլուխս ու ոտքս ուղտին փորին խօփէր էն , և ահա միւս կողմէն ալ նոյն գործողութիւնը կատարող մարդու մը կ'ընդհարեմ , և կ'ինքսմ ոտնամբարձ ետևի կողմիս վրայ : ձիւ մը արձակեցի , և զգա-ցի որ ոտքս քաշելով զիս կ'ազատէին , շնորհակալ եմ : Գլուխս ժայռի մը հան-դիպած էր ինկած ատենս , ասոր հետե-ւանքն ետքէն իմացայ երբ դանկիս յետ-նակողմը տաք բան մը զգացի . հոգ չէ արիւնս էր որ հօտի սկսած էր , բայց մորթս միայն ծածկուած էր , դանկս չէր կոտրած , շնորհակալ եմ Գլխարկս փնտ-ռեցի , որ խոռոչի մը մէջ կը գտնուէր իշու մը ոտքին տակ , էջը համոզելով ոտ-քին տակէն առի և զիտումս ըրած չըլլա-լը գիտնալով ներքի իրեն : Աղմուկն ու ժխորը կը շարունակէին միննոյն ընթաց-քով . . . Ո՛վ Գիտ , ո՛վ Հայրդ աստուա-ծոց . ո՛վ . . . Անթառամ , ու՛ր էք , ելք մը՝ ծակ մը ցուցէք ինձ այս քառսէն դուրս ելլելու համար , կըսէի միտքսով , եթէ ոչ սատակս պիտի ելէ այս տեղէն , և չպիտի կրնամ ոչ Անթառամը այցելել , ոչ ալ Ողիմպոս դառնալ , և աստուածներու նկարագրել Իզմիրի փորձանքներու (փո-ղոց ըսել կուզեմ) անտանելի բայց բա-րեկարգութիւնը խիտ կարելի վիճակը : Տեսնե՛ք ինչպէս պիտի ազատիմ : Պիտի ազատիմ , չեմ գիտէր :

ՊՐՈԹԷ

(Արշալույս)

— Երանանկիւն

Ա.Գ.Ի.Ի ԱՇԽԱՐՀՔԷՆ ՆԱՄԱԿ

Առ մեծայարդ Ստեփան Էֆէնտի Փափաղեան .

Ձեր նախորդ օճախղատէ ընկերնե-րէն շատ շատ բարեւ : ձեր ամենօրեայ կատարած գործերնիդ իմանալով շատ կուրախանանք իւր , դուռն ալ եթէ հոս մեր գովը եղած ըլլայիք նէ ան մէկալ օճախղատներուն ձեռքէն բան մը ալ գալիք չունէր , մի վստաիք , մենք ամեն օր վասն յաջողութեան գործոց ձերոց կաղօթէնք կըր , Խրիմեանին ը-րածը իմացանք , շատ ուրախացանք , ինչպէս նաև Թիւրքանտեան Նիկողո-սի և մէկ քանի առաջնորդ եպիսկո-պոսաց ձեզի հետ պիլլէշմիշ ըլլալը մեծ ցնձութիւն պատճառեց մեզի : Փունջ ախպարնուս ալ շատ բարեւ , Սուրէնեանին ալ , առաջինին ըսէք որ յիսուս օրինակ փունջ իրկէ հոս , բաժանորդագրիներն կանխիկ է , Հայ-րենիքի բաժանորդագրութիւնը կա-մաց կամաց պիտի դադարեցնեմ կար-ծեմ՝ իսկ Սուրէնեանին ալ ըսէք զի մեր սոյ սօփին պիլլէշմիշ ինք ապրանք տայ , էրթայ թող մեզի համար ըսէ անոնք մեր խաթրէն չեն եղար , աս-խէրը կընենք իրեն , չիւնքի վերջին Ընդհանուր ժողովին մէջ ըրածին շատ հաւանեցանք , մասնաւորապէս դուք Փափաղեան Էֆէնտի շատ շնորհակալ-

